Հ-87

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՇԽԵՆ ԱՆՈՒՇԱՎԱՆԻ

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ 1991-2018 ԹԹ.

Է. 00.02 «Համաշխարհային պատմություն»

մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի

գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ռուբեն Հովհաննեսի Մելքոնյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ռուբեն Կառլենի Կարապետյան

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գոռ Գևորգի Գևորգյան

Առաջատար կազմակերպություն՝

Խաչատուր Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2026թ. փետրվարի 25-ին, ժամը 12:00-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ԲԿԳԿ 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019 Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2026թ. հունվարի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝

պ. գ. թ., դոցենտ Ա. Ա. Փաշայան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

«Սառը պատերազմի» ավարտից հետո միջազգային հարաբերությունների համակարգում ձևավորվեցին նոր իրողություններ, որոնց պայմաններում Հնդկաստանի Հանրապետությունը ստիպված էր հաղթահարել 1990-ականների ծանր տնտեսական մարտահրավերները՝ հաշվի առնելով, որ ԽՍՀՄ-ը Հնդկաստանի գլխավոր տնտեսական և ռազմավարական գործընկերն էր: 1991-1998 թթ. Հնդկաստանին հաջողվեց որոշակիորեն հաղթահարել տնտեսական ճգնաժամի հետևանքները: 1998 թ. միջուկային փորձարկումներից հետո Հնդկաստանի արտաքին քաղաքականության մեջ անվտանգության բաղադրիչն ու ռազմավարական զսպումը դարձան կենտրոնական տարրեր. Հնդկաստանն իրեն դիրքավորեց որպես միջուկային տերություն: Արտաքին քաղաքական խոսույթում ուժեղացավ ինքնիշխանության, ռազմավարական ինքնուրույնության և հավասարակշռության պահպանման շեշտադրումը: 2000-ականների սկզբներից Հնդկաստանը ԱՄՆ-ի հետ ձեռնամուխ եղավ համակարգված ռազմավարական երկխոսությանը: 1989-1999 թթ. ամերիկյան պատժամիջոցներից հետո սկսվեց վստահության աստիճանական վերականգնում, որը հանգուցալուծվեց 2005 թ. ԱՄՆ-Հնդկաստան միջուկային համաձայնագրով: 2006 թ. Հնդկաստանը դարձավ BRICS-ի հիմնադիր անդամ: 2008 թ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամը G20-ին վերածեց գլոբալ տնտեսական կառավարման կենտրոնական հարթակի, որի անդամ էր նաև Հնդկաստանը: Որպես խոշոր զարգացող տնտեսություն, Հնդկաստանը սկսեց ավելի ակտիվ մասնակցել միջազգային օրակարգերի ձևավորմանը՝ ներկայացնելով զարգացող երկրների շահերը և հանդես գալով բազմակողմ համագործակցության օգտին: Արդեն 2010-ականներին Հնդկաստանը հանդես էր գալիս որպես զարգացող աշխարհի՝ Global South-ի շահերի առաջատար, բազմաբևեռ աշխարհի ջատագով, ակտիվ դեր խաղում զարգացման ծրագրերի ֆինանսավորման, ներառական աճի և ֆինանսական համակարգերի բարեփոխումների հարցերում: Չնայած Պակիստանի հետ ռազմաքաղաքական հակամարտությանը, 2000-ականների կեսերին (հատկապես 2004 թ. հետո՝ Մանմոհան Սինգհի կառավարության շրջանում) Հնդկաստանն ակտիվացրեց արտաքին քաղաքականության դիվերսիֆիկացումը, ձգտեց նվազեցնել մեկ կենտրոնից կախվածությունը, առավել զարգացնել կապերը միաժամանակ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, ԵՄ-ի, Արևելյան Ասիայի, Աֆրիկայի, Մերձավոր Արևելքի, Առաջավոր Ասիայի, ինչպես նաև Հարավային Կովկասի հետխորհրդային երկրների հետ: Հարավային Կովկասն աստիճանաբար դիտարկվեց որպես համագործակցության հեռանկարային ուղղություն՝ Կենտրոնական Ասիայի, Սև ծովի և Եվրոպայի հետ

կապող հաղորդակցային միջանցքների և դրանից բխող գործընթացների համատեքստում:

Թեմայի արդիականությունը: Ատենախոսության թեման աչքի է ընկնում գիտական և քաղաքական արդիականությամբ՝ պայմանավորված Հարավային Կովկասում «Սառը պատերազմի» ավարտից մինչև 2018 թ. ընկած ժամանակահատվածում Հնդկաստանի արտաքին քաղաքականության կերպափոխումներն ուսումնասիրելու հրամայականի հետ: Հարավային Կովկասում Հնդկաստանի արտաքին քաղաքականության հետազոտությունը ուղիղ կապ ունի նաև նշված ժամանակահատվածում միջազգային հարաբերություններում խմորվող գործընթացների, ինչպես նաև հետսառպատերազմյան տարածաշրջանային մրցակցության հետ, որի շրջանակներում Հնդկաստանը ձգտում էր պատշաճ տեղ գրաղեցնել միջազգային համակարգում: Հարավային Կովկասը Հնդկաստանի համար կարևոր ու հեռանկարային էր որպես տեխնոլոգիական և ենթակառուցվածքային նախագծերի հարթակ, ներդրումային նոր շուկա, ինչպես նաև տրանսպորտային և էներգետիկ հանգույց: Օգտագործելով Հարավային Կովկասի հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի հետ ունեցած պատմական կապերը՝ Հնդկաստանը ձեռնամուխ եղավ քաղաքական, առևտրատնտեսական, մշակութային, էներգետիկ, տեխնոլոգիական ու կրթական կապերի ձևավորմանն ու զարգացմանը: Միևնույն ժամանակ, Հարավային Կովկասի հանրապետություններից յուրաքանչյուրի հետ Հնդկաստանի համագործակցությունն աչքի էր ընկնում որոշակի առանձնահատկություններով՝ պայմանավորված ինչպես երկկողմ օրակարգերի, այնպես էլ՝ տարածաշրջանում անվտանգության միջավայրի թելադրած պայմաններով:

Թեման հատկապես կարևոր է Հայաստանի Հանրապետության տեսանկյունից՝ հաշվի առնելով 2020 թ. Արցախյան պատերազմից հետո Հնդկաստանի հետ հարաճուն ռազմաքաղաքական համագործակցության հանգամանքը: Անհերքելի է, որ առանց 1991-2018 թթ. Հարավային Կովկասի նկատմամբ Հնդկաստանի քաղաքականության ուսումնասիրության անհնար կլինի հասկանալ ոչ միայն Հայաստան-Հնդկաստան, այլև 2018 թ. մինչ օրս Հարավային Կովկաս-Հնդկաստան հարաբերությունների փոխակերպումներն ու դրանց պատճառները:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել Հնդկաստանի և Հարավային Կովկասի երկրների միջև հարաբերությունների սկզբնավորումն ու զարգացումը՝ բացահայտելով հիմնականում քաղաքական, տնտեսական և ռազմավարական նշանակություն ունեցող

ուղղությունները, նաև՝ մշակութային և կրթական բաղադրիչները: Աշխատանքի նպատակն է ցուց տալ նախկին ԽՍՀՄ հանրապետությունների հետ պատմական և պատմամշակութային կապերի ազդեցությունը նոր աշխարհակարգի պայմաններում՝ Հնդկաստանի տարածաշրջանային քաղաքականության ձևավորման հարցում: Աշխատանքի խնդիրներից է Հարավային Կովկասում Հնդկաստանի քաղաքականությունն ի ցույց դնել միջազգային փոխհարաբերությունների բարդ փոխազդեցությունների ու մրցակցության համատեքստում:

Ըստ այդմ, ձևակերպվել են հետևյալ խնդիրները՝

1. Ուսումնասիրել Հնդկաստանի արտաքին քաղաքականությունը «Սառը պատերազմից» հետո ձևավորված բարդ ու խրթին աշխարհաքաղաքական միջավայրում:
2. Ուսումնասիրել «Սառը պատերազմից» հետո Հնդկաստանի նշանակությունը բազմաբևեռ աշխարհակարգում:
3. Վերլուծության ենթարկել Հարավային Կովկասի հանրապետությունների հետ հարաբերությունների սկզբնավորման, ձևավորման և հետագա զարգացման հիմնական փուլերը 1991-2018 թթ. ընթացքում:
4. Բացահայտել Հարավային Կովկասում Հնդկաստանի արտաքին քաղաքականության հիմնական գործիքակազմերը:
5. Վերլուծության ենթարկել Հնդկաստան-Հայաստան, Հնդկաստան-Վրաստան և Հնդկաստան-Ադրբեջան հարաբերությունների գերակա ուղղությունները՝ շեշտադրելով Հնդկաստանի տեսանկյունը:
6. Դիտարկել Հարավային Կովկասի հանրապետություններից յուրաքանչյուրի հետ Հնդկաստանի ունեցած կնճռոտ խնդիրներն ու դրանց պատճառները:
7. Համեմատել ու համադրել Հնդկաստան-Վրաստան, Հնդկաստան-Ադրբեջան, Հնդկաստան-Հայաստան հարաբերությունների առանձնահատկությունները:
8. Ուսումնասիրել միջազգային կապուղիների և առևտրատնտեսական հնարավորությունների ընդլայնման համատեքստում Հնդկաստանի աշխարհաքաղաքական շահերը և դրանց իրագործման հնարավորությունները Հարավային Կովկասում նշված շրջափուլում:
9. Դիտարկել հարավկովկասյան տարածաշրջանի և Հնդկաստանի միջև հարաբերությունների զարգացման հեռանկարը՝ հաշվի առնելով տարածաշրջանին բնորոշ ռազմաքաղաքական հակամարտությունները (Հնդկաստան-Պակիստան, Լեռնային Ղարաբաղի հակամարտություն և այլն):

Ատենախոսության ժամանակագրական շրջանակները: Ատենախոսության ժամանակագրական սահմանները ներառում են 1991-2018 թթ.,

որը համընկնում է «Սառը պատերազմի» ավարտի, ԽՍՀՄ-ի փլուզման, Հարավային Կովկասի երեք հանրապետությունների անկախացման ու Հնդկաստան-Հարավային Կովկաս հարաբերությունների սկզբնավորման ու զարգացման հետ: Մինչև 2018թ. Հնդկաստանի քաղաքականությունը Հարավային Կովկասում զարգանում էր էվոլյուցիոն ձևով և սահմանափակ ներգրավվածությամբ, իսկ 2019 թ. հետո Հնդկաստանի արտաքին քաղաքականության մեջ սկսվում է որակապես նոր փուլ, որն այլևս չի համընկնում 1991-2018 թթ. քաղաքականության տրամաբանության հետ: 2019 թ. Հնդկաստանում ձևավորված կառավարությունը որդեգրեց որակապես նոր՝ պրոակտիվ արտաքին քաղաքականությունը՝ կապված միջազգային զարգացումներում տեղ գտնող փոփոխությունների հետ: Հնդկաստանը սկսեց իրեն դիրքավորել որպես գլոբալ պատասխանատու, ինչպես բազմաբևեռ միջազգային համակարգի առանցքային խաղացող, որը ներազդեց արտաքին քաղաքականության հարավկովկասյան ուղղության վրա:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Ուսումնասիրության տեսանկյունից կիրառվել են առաջնային (ելույթներ, ուղերձներ, հայտարարություններ, արտաքին քաղաքականությանը և ազգային անվտանգությանը վերաբերող փաստաթղթեր, որոնք ուղղակիորեն առնչվում են հետազոտության խնդրո առարկային), երկրորդային (հետազոտության առարկային և խնդիրներին առնչվող հոդվածներ, մենագրություններ, վերլուծական աշխատանքներ, Հնդկաստանի արտաքին քաղաքականությանը վերաբերող նյութերի և փաստաթղթերի ժողովածուներ, ատենախոսություններ) և երրորդային (վիճակագրական տվյալների շտեմարաններ, տնտեսական հետազոտությունների զեկույցներ, միջազգային տեղեկատվական հարթակների տվյալներ ու մամուլի հրապարակումներ) աղբյուրներ: Հետազոտությունն իրականացվել է որակական մեթոդաբանությամբ՝ համատեղելով պատմական քննության և քաղաքականության վերլուծության մեթոդները, որի շնորհիվ հետսառպատերազմյան շրջանում Հնդկաստանի հարավկովկասյան քաղաքականության համակողմանի ուսումնասիրություն է իրականացվել: Համեմատական-ժամանակագրական մեթոդով աշխատանքը վերլուծում է Հնդկաստանի արտաքին քաղաքականության էվոլյուցիան և զուգահեռներ անցկացնում տարածաշրջանի երեք պետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի նկատմամբ Հնդկաստանի վարած քաղաքականության հետ՝ վեր հանելով նմանությունները, տարբերությունները և փոխակերպումները:

Հետազոտության գիտական նորույթը: Հարավային Կովկաս-Հնդկաստան հարաբերությունների (1991-2008 թթ.) ուսումնասիրությանը նվիրված

ատենախոսությունը մեզանում առաջին փորձն է՝ նոր լույսի ներքո ուսումնասիրել նշված թեման: Աշխատանքը ներառում է ոչ միայն Հնդկաստանի երկկողմ հարաբերությունների տարբեր կողմեր Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ, այլև նաև դիտարկում է Հնդկաստան-Հարավային Կովկաս հարաբերությունները՝ որպես մեկ միասնական միջավայր:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը Հնդկաստանի արտաքին քաղաքականությունն է հարավկովկասյան տարածաշրջանում, որը Հնդկաստանի ընդհանուր արտաքին քաղաքական կարևոր ուղղություններից մեկն է: Առարկան 1991-2018 թթ. ժամանակահատվածում Հարավային Կովկասի հանրապետությունների հետ Հնդկաստանի երկկողմ հարաբերությունների զարգացման դինամիկան է, տարածաշրջանային անվտանգային մարտահրավերների, հատկապես՝ Պակիստան-Ադրբեջան ռազմաքաղաքական մերձեցման ազդեցությունը Հնդկաստանի արտաքին քաղաքական առաջնահերթությունների ձևավորման վրա:

Ատենախոսության գործնական և կիրառական նշանակությունը: Հետազոտությունը կարող է շահեկան լինել Հայաստանում տվյալ ոլորտի հետագա զարգացման և ուսումնասիրության տեսանկյունից: Ատենախոսության առանձին դրույթներ կարող են ընդգրկվել մասնագիտական ֆակուլտետներում որոշակի առարկաների և հատուկ դասընթացների դասավանդման, ինչպես նաև դասագրքերի և ուսումնական ծրագրերի կազմման գործընթացներում:

Ատենախոսությունը կարող է օգտակար լինել նաև ՀՀ արտաքին գործերի նախարարությանը, ինչպես նաև համապատասխան գերատեսչությունների համար՝ Հայաստան-Հնդկաստան հարաբերություններին առնչվող հարցերում:

Ատենախոսության փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը: Ատենախոսությունը քննարկվել է և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ԵՊՀ իրանագիտության ամբիոնում: Ատենախոսության փորձաքննությունն իրականացվել է հեղինակի՝ միջազգային գիտաժողովներում ունեցած մասնակցությամբ և թեմայի շուրջ ներկայացված զեկուցումներով, ինչպես նաև ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից հավանության արժանացած գրախոսվող գիտական պարբերականներում և հրատարակություններում տպագրված հոդվածներով:

Օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսություն: Ատենախոսության տեսանկյունից շահեկան են եղել հայերեն, անգլերեն, ռուսերեն, գերմաներեն՝ տարբեր աղբյուրների ու գրականության ուսումնասիրություններն ու վերլուծությունները:

Ըստ արծարծվող խնդիրների ուսումնասիրվել են Հնդկաստանի պատմության տարբեր փուլերը՝ ներառյալ միջնադարյան, նոր և նորագույն շրջանները:

Հնդկաստանի միջնադարի և նոր շրջանի պատմությունն ուսումնասիրելիս օգտակար է եղել Գևորգ Քիլիմջյանի դասախոսությունների շարքը[1], որն ապահովել է հետազոտության պատմագիտական հիմքը: Թեմայի տեսական հիմնավորումների համար օգտագործվել են Հենրի Քիսինջերի[2], Ռաֆայել Խանի, Ամանդա Լևիլանտի, Միշա Հանզելի[3], Էմիլիան Կավալսկիի[4], Ջայանտա Կումար Ռեյի[5] մենագրությունները: Ատենախոսությունում անդրադարձ է կատարվել նաև Հնդկաստանի միջազգային դերին, որի նպատակով ուսումնասիրվել են ԱՄՆ-Հնդկաստան և Չինաստան-Հնդկաստան հարաբերությունները: Այս ուղղությամբ օգտակար են եղել Բերնարդ Բայտելմայեր-Բերինիի[6], Տայաբբա Ջաֆերիի[7], Տանվի Մադանի[8] մենագրությունները: Ատենախոսությունում ուշադրություն է դարձվել նաև Հնդկաստանի կարևոր գործընկերների՝ Ռուսաստանի և Իրանի հետ հարաբերություններին՝ ելնելով այն հանգամանքից, որ երկու պետություններն էլ ուղղակիորեն առնչվում են ինչպես Հարավային Կովկասի, այնպես էլ եվրասիական տարածաշրջանի քաղաքական դինամիկային: Հնդկաստան-Իրան հարաբերությունների քաղաքական, էներգետիկ և տրանսպորտային բաղադրիչները ներկայացնելու համար օգտագործվել են Սուջատա Աշվարյայի[9], Քաշիֆ Հասան Խանի[10] մենագրությունները: Հնդկաստան-Ռուսաստան հարաբերությունների պատմական հիմքերի, զարգացման տարբեր փուլերի վերաբերյալ փաստական տվյալներ են առկա Ռուսաստանի Դաշնությունում Հնդկաստանի դեսպանության

[1]Քիլիմջյան Գ., «Հնդկաստանի,Չինաստանի և Ճապոնիայի միջնադարի ու նոր ժամանակների պատմություն» (դասախոսություններ),Մեկնարկ, Երևան, 2018.
[2]Киссинджер Г., "Мировой порядок", AST Publishers, Moscow, 2015.
[3]Hansel M., Khan R., Levaillant A. "Theorizing Indian Foreign Policy", Routledge London, 2019.
[4]Kavalski E., "India And Central Asia The Mythmaking And International Relations Of A Rising Power", New York, 2010.
[5]Kumar R. J., "India's Foreign Relations,1947-2007", Routledge, India, 2015.
[6]Beitelmair-Berini B., "India's Grand Strategy and Foreign Policy: Strategic Pluralism and Subcultures", Routledge, London,2023.
[7]Jaffery T., "US–India Partnership in the Indo-Pacific: Implications for China", Routledge, London,2025.
[8]Madan T., "Fateful Triangle how China shaped U.S.-India Relations during the Cold War", Washington, 2020.
[9]Ashwarya S., "India-Iran Relations Progress, Problems and Prospects", Routledge, Oxon, 2017.
[10]Hasan Khan K., "India's Economic Corridor Initiatives: INSTC and Chabahar Port", Routledge, London, 2024.

զեկույցում[11], Չանդրա Ռեկհայի[12], Չեն Ցումինգի[13] վերլուծություններում: Պակիստանի հետ առճակատման, Քաշմիրի հակամարտության պատմության և արդի իրավիճակի վերաբերյալ համապարփակ վերլուծություններ են պարունակում Սամիր Ահմադի[14], Չահիտանյա Ռավիի[15], Սանջիվ Կումարի[16], Նիրոդե Մոհանտիի[17] աշխատությունները, որոնք ատենախոսության մեջ օգտագործվել են հակամարտությունը միջպետական մրցակցության ձևաչափով բնութագրելու համար:

Ատենախոսության հիմնական ուղղություն համարվող Հարավային Կովկասին անդրադառնալիս կարևոր է եղել ուսումնասիրել նաև տարածաշրջանի հակամարտությունները և հետխորհրդային ժամանակաշրջանի անվտանգային միջավայրը, քանի որ հենց այս պայմաններում է ձևավորվում Հնդկաստանի փոխգործակցությունը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ: Այս առումով ուշագրավ են Նինո Կեմոկլիձեի, Սերվին Մուրի, Ջերեմի Սմիթի, Գալինա Եմելանովայի[18], Օհաննես Գեուկջյանի[19], Վիգեն Չեթերյանի[20] մենագրությունները:

Հայ-հնդկական փոխգործակցության վաղ շրջանի իրադարձությունների վերաբերյալ արժեքավոր պատմական փաստեր են զետեղված Մեսրոբ Ջ. Սեթի[21],

[11]Посольство Индии в России, "Двусторонние отношения между Индией и Россией", 2013, http://www.indianembassy.ru/index.php/ru/2013-07-06-11-02-37/2013-07-06-10-56-05 (հասանելի է 23.05.2019թ.).
[12]Rekha Ch., "India-Russia Post Cold War Relations: A New Epoch of Cooperation", Routledge, London, 2024.
[13]Zuming C., "Economic Globalisation and China-Russia-India Cooperation", Institute of Chinese Studies, China Report, Volume 39, Issue 3, Delhi, 2003, pp. 371-374, https://journals.sagepub.com/doi/10.1177/000944550303900313 (հասանելի է 20.05.2024թ.).
[14]Ahmad S., "Track Two Diplomacy Between India and Pakistan: Peace Negotiations and Initiatives", Routledge, London, 2023.
[15]Ravi Ch., "South Asian Instability: The India–Pakistan Missile Accident",Routledge, London, 2024.
[16]Kumar S. H. M., "Deconstructing India–Pakistan Relations: A Comprehensive Analysis", Routledge, London, 2025.
[17]Mohanty N., "America, Pakistan, and the India Factor", New York, 2013.
[18]Kemoklidze N., Moore C., Smith J., Yemelanova G., "Many Faces of the Caucasus", London, 2018.
[19]Geukjian O., "Ethnicity, Nationalism and Conflict in the South Caucasus, Nagorna-Karabakh and the Legacy of Soviet Nationalities Policy", London, 2016.
[20]Четерян В., "Малые войны и большая игра", Ереван, 2003.
[21]Seth M. J., "History of Armenians in India from the earliest times to the present day", London,1897.

Գրիգոր Թանանյանի[22], Վահան Բայբուրդյանի[23], Վարդգես Միքայելյանի[24], Ջոն Կիրակոսյանի[25], Հրաչյա Աճառյանի[26] մենագրություններում և Նաիրա Մկրտչյանի[27] աշխատանքներում: Հայ-հնդկական արդի հարաբերությունները ուսումնասիրելիս, սկսած Հայաստանի անկախացումից՝ ներառելով քաղաքական, տնտեսական և մշակութային ոլորտները, կարևոր հիմք է ծառայել Հայաստանում Հնդկաստանի դեսպանության զեկույցը[28], որտեղ հիմնականում ներկայացված են կողմերի քաղաքական օրակարգը, իրավական ու փաստական հիմքերը: Աշխատանքում օգտագործվել են նաև հնդիկ բարձրաստիճան դիվանագետների հարցազրույցները[29], որոնք հնարավորություն են տվել բացահայտելու Հարավային Կովկասում երկկողմ հարաբերությունների հիմնական միտումները:

Հնդկաստան-Վրաստան պատմական կապերի բացահայտման գործում օգտակար է եղել Թամաս Գամկրելիձեի և Վյաչեսլավ Իվանովի համատեղ աշխատությունը[30], որտեղ շեշտադրված են նախահնդեվրոպական լեզվական շերտերի և պատմամշակութային ընդհանրությունների վերաբերյալ տվյալները: Արդի ժամանակաշրջանի երկկողմ քաղաքական հարաբերությունները ուսումնասիրելիս

[22]Թանանյան Գ. «Ողոգայթ Փառաց», Հրատարակման 230-ամյակի առթիվ, 2013, http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/13._Grigor_Tananyan.pdf (հասանելի է 26.06.2022թ.):

[23]Բայբուրդյան Վ.,«Ուշ միջնադարում հայերի շփումների պատմությունից Հարավային և Հարավ-Արևելյան Ասիայի ու Հեռավոր Արևելքի երկրների հետ» ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության Ինստիտուտ, Արևելագիտական Ուսումնասիրություններ 2, Երևան, 2011:

[24]Միքայելյան Վ., «Հայ գաղթաշխարհի պատմություն(միջնադարից մինչև 1920թ.)»,2-րդ հատոր՝ Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղութները, Հնդկաստան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2003:

[25]Կիրակոսյան Ջ., «Հնդիկ ժողովրդի ազգային ազատագրական պայքարի հերոսական էջը»,Երևան, 1957:

[26]Աճառյան Հ., «Հայ գաղթականության պատմություն», (գլխ. խմբագիրներ՝ Ավետիսյան Բարսեղյան Հ.,Հ.), Զանգակ-97, Երևան, 2002:

[27]Մկրտչյան Ն., «Հայ-հնդկական փոխառնչությունների պատմությունից», ՀՀ ՊՆ, Զինուժ Մեդիա, https://milmedia.am/hayzinvor/hayzinvor_detales/14070 (հասանելի է 26.10.2025թ.):

[28]Ministry of External Affais, Government of India, "Bilateral Brief on India- Armenia Relations", Bilateral Brief, 2018, https://mea.gov.in/Portal/ForeignRelation/India_-_Armenia_Bilateral_Brief__-__Dec_2018.pdf (հասանելի է 23.05.2019թ.).

[29]Yerevan News, "Suresh Babu (interview)," YouTube video, 05.05.2016, https://www.youtube.com/watch?v=DHe8oyLNBks (հասանելի է 15.12.2025թ.), նաև՝ Պանդեյ Ռինա, «Հայաստան-Հնդկաստան. հազարամյա հարաբերություններ, նոր հեռանկարներ», YouTube video, 01.12.2022, https://www.youtube.com/watch?v=dt2gCVNIjkg (հասանելի է 15.12.2025թ.).

[30]Гамкрелидзе Т.В., Иванов В., "Индоевропейский язый и индоевропейцы", Тбилиси, 1984, http://nevmenandr.net/scientia/ielang.pdf (հասանելի է 01.07.2020թ.).

որպես առաջնային պաշտոնական աղբյուր են դիտարկվել Հնդկաստանի արտաքին գործերի նախարարության հաշվետվությունները[31], Վրաստանի հետ հարաբերություններին նվիրված զեկույցները[32], բարձրաստիճան դիվանագետների հարցազրույցները[33]: Տնտեսական համագործակցության, ռազմավարական ներդրումների և երկկողմ առևտրի վերաբերյալ իրավական հիմքերը ներկայացնելու նպատակով օգտագործվել է Հնդկաստանի Հանրապետությունում Վրաստանի դեսպանության և ՄԱԿ-ի տնտեսական ու սոցիալական հանձնաժողովում մշտական ներկայացուցչության իրավական փաստաթուղթը[34], որն արտացոլում է կողմերի պաշտոնական դիրքորոշումները, իրավաքաղաքական օրակարգը և համագործակցության ոլորտների ընդլայնման միտումները:

Ադրբեջանի հետ հարաբերությունների ուսումնասիրության գործընթացում կարևոր դեր է ունեցել Հնդկաստանում Ադրբեջանի Հանրապետության դեսպանության զեկույցը[35]: Տնտեսական համագործակցության ուսումնասիրության նպատակով վերլուծության են ենթարկվել Հնդկաստանի շահերը տարածաշրջանում՝ հիմնվելով հնդկական էներգետիկ ընկերությունների՝ GAIL (India) Limited-ի[36] և ONGC Videsh Limited-ի[37], ինչպես նաև Ադրբեջանի պետական նավթային ընկերության՝ SOCAR-ի[38] պաշտոնական կայքերում զետեղված տվյալների վրա: Պակիստան-Ադրբեջան ռազմաքաղաքական փոխհարաբերությունների ուսումնասիրության համար օգտագործվել են Պակիստանի Իսլամական Հանրապետության Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի հրապարակած զեկույցը[39], բարձրաստիճան դիվանագետների պաշտոնական ուղերձները[40], որոնք

[31]MEA Library, Ministry of External Affairs, Government of India, "Annual Report 2005- 2006", Ministry of External Affairs, https://mealib.nic.in/?pdf2533?000 (հասանելի է 02.11.2022թ.).

[32]Ministry of External Affairs, Government of India, "India-Georgia Relations", Report, 2013, https://mea.gov.in/Portal/ForeignRelation/Georgia_Brief_2013.pdf (հասանելի է 11.02.2020թ.).

[33]Sansad TV, "Indian Standard Time with Archil Dzuliashvili, Ambassador of Georgia", YouTube video, 19.05.2020, https://www.youtube.com/watch?v=1TJkqA4LyF0 (հասանելի է 17.10.2025թ.).

[34]Embassy of Georgia to the Republic of India and the Permanent Representation to the Economic and Social Commission of the United Nations, "Bilateral Relations", "Legal Base", http://www.india.mfa.gov.ge/default.aspx?sec_id=739&lang=2 (հասանելի է 11.10.2022թ.).

[35]Embassy of the Republic of Azerbaijan to the Republic of India, "Information on Azerbaijan-India Bilateral Relations", Report, http://newdelhi.mfa.gov.az/en/content/41 (հասանելի է 23.05.2019թ.).

[36]GAIL (India) Limited, New Delhi, https://gailonline.com/home.html (հասանելի է 15.04.2022թ.).

[37]Oil and Natural Gas Corporation Limited, Nelson Mandela Road, Vasant Kunj, New Delhi, https://www.ongcindia.com/wps/wcm/connect/en/home/ (հասանելի է 13.04.2021թ.).

[38]SOCAR Trading, https://www.socartrading.com/ (հասանելի է 03.07.2022թ.).

[39]Senate of Pakistan, Senate Foreign Relations Committee, "Visit to Azerbaijan", December 2008.

[40]"Message of H.E Alizada A., Ambassador of Azerbaijan on the occasion of 25th Anniversary of Azerbaijan-Pakistan Diplomatic Relations", The Diplomatic Insight. 10.5, 31.05.2017, p. 9,

սկզբնաղբյուրային նշանակություն ունեն: Ռազմական համագործակցության զարգացումների վերաբերյալ փաստական տվյալներ են ներկայացված Նիյազի Սաբիր Նիյազովի հետազոտությունում[41], որն ատենախոսության մեջ օգտագործվել է՝ հիմնավորելու Պակիստան-Ադրբեջան ռազմական մերձեցման ազդեցությունը Հնդկաստանի տարածաշրջանային հաշվարկների և, ընդհանրապես, Հարավային Կովկասում նրա դիրքավորման վրա:

Աշխատանքի կառուցվածքն ու բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից՝ յուրաքանչյուրը երկուական ենթագլխով, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ձևակերպվում են օբյեկտը, առարկան, աշխատանքի նպատակն ու խնդիրները, հետազոտության գիտական նորույթը, թեմայի ժամանակագրական շրջանակը, ներկայացվում են աշխատության փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը, ինչպես նաև օգտագործված աղբյուրների ու գրականության համառոտ տեսությունը:

Ատենախոսության առաջին գլուխը վերնագրված է ***«Հնդկաստանի արտաքին քաղաքականության հիմնական առանձնահատկությունները 20-րդ դարի վերջին եվ 21-րդ դարի սկզբին. ընդհանուր ակնարկ»*** և ներկայացնում է Հնդկաստանի արտաքին քաղաքականության վերափոխումները և ուղղությունները: Առաջին ենթագլխում՝ վերնագրված ***«Հնդկաստանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները հետսառպատերազմյան տարիներին»***, նորովի են մեկնաբանվել հետսառպատերազմյան շրջանում Հնդկաստանի արտաքին քաղաքականության վերածևավորումը և նոր աշխարհակարգի պայմաններում արտաքին քաղաքականության առանձնահատկությունները: Միաժամանակ ներկայացնելով Հնդկաստան-ԵՄ, Հնդկաստան-ԱՍԵԱՆ, Հնդկաստան-Իրան, Հնդկաստան-Պակիստան հարաբերությունների դինամիկան: Վերլուծության

---

http://thediplomaticinsight.com/?page_id=10 նաև՝ http://go.galegroup.com.uaccess.univie.ac.at/ps/retrieve.do?tabID=T003&resultListType=RESULT_LIST&searchResultsType=SingleTab&searchType=AdvancedSearchForm&currentPosition=36&docId=GALE%7CA494897454&docType=Article&sort=RELEVANCE&contentSegment=ZONE-MOD1&prodId=AONE&contentSet=GALE%7CA494897454&searchId=R1&userGroupName=43wien&inPS=true. (հասանելի է 23.05.2019թ.).

[41] Ниязов Н.С., "Развитие Азербайджано-Пакистанских связей в военной области в 1994–2010 годах", Международные Отношения, Вестник Волгоградского Государственного Университета, Серия 4, УДК 94.327,ББК 63.3(0)6+68.8(5Азе), 2011, стр. 104-113, https://volsu.ru/upload/medialibrary/f10/ekhgeqyvxifbvo_qwrmdcosgn_qcnojd.4_gnnousesobbtcw.istzfwcupihgkvuuzbhnpcfuutvw_nxs1v19q_2011.pdf (հասանելի է 20.05.2019թ.).

ընթացքում ցույց է տրվել Հնդկաստանի ներգրավվածությունը Հարավային Կովկասում՝ հատկապես էներգետիկ և տրանսպորտային նախաձեռնությունների, ինչպես նաև տարածաշրջանային անվտանգության միջավայրի ազդեցության համատեքստում: Երկրորդ ենթագլխում՝ վերնագրված ***«Հնդկաստանի հարաբերություններն ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Չինաստանի հետ հետսառպատերազմյան դարաշրջանում»***, բացահայտվել է Հնդկաստանի հարաբերությունների էվոլյուցիան ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Չինաստանի հետ՝ ցույց տալով, որ ԱՄՆ-ի հետ հարաբերությունները զարգացել են տնտեսական-տեխնոլոգիական համագործակցության շրջանակներում, Չինաստանի հետ՝ տնտեսական փոխկախվածության և ռազմավարական մրցակցությամբ իսկ Ռուսաստանի հետ՝ հարաբերությունների շարունակականության և ռազմավարական գործընկերության պահպանման տրամաբանությամբ: Այս համատեքստում Հարավային Կովկասը դիտարկվել է Հնդկաստանի համար որպես մրցակցային-հավասարակշռող միջավայր, որտեղ Չինաստանի աճող տնտեսական և ենթակառուցվածքային ներկայության պայմաններում Հնդկաստանը փորձել է առաջ մղել սեփական կապուղիները, գործընկերային ձևաչափերը և ներկայության գործիքները:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ ***«Հնդկաստան-Հայաստան հարաբերությունները 1991-2018 թթ.»*** քննարկում է երկկողմ հարաբերությունների պատմական նախադրյալները, առանցքային ուղղությունները, և զարգացման դինամիկան: Առաջին ենթագլխում վերնագրված՝ ***«Հայ-հնդկական առնչությունները. պատմական ակնարկ»***, ուսումնասիրվել և ներկայացվել են հայ-հնդկական առնչությունների պատմական զարգացումը՝ հնագույն ժամանակների առևտրական կապերից և հայկական գաղթօջախների ձևավորումից մինչև Մոնղոլական կայսրության շրջանում հայերի հաստատումը Հնդկաստանի կարևոր քաղաքներում: Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխը կրում է ***«Հնդկաստան-Հայաստան քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունները»*** վերնագիրը, որտեղ ներկայացվել են հայ-հնդկական հարաբերությունների նորագույն փուլը՝ խորհրդային շրջանի նախադրյալներից մինչև 1992 թ. հաստատված դիվանագիտական կապերի խորացում քաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական, կրթական ու մշակութային ուղղություններով՝ նշելով նաև գործընկերության ամրապնդմանն ուղղված առաջարկությունները:

Ատենախոսության երրորդ գլուխը վերնագրված է ***«Հնդկաստան-Վրաստան հարաբերությունները 1991-2018 թթ.»*** և ներկայացնում է երկկողմ հարաբերությունների առանձնահատկությունները քաղաքական տնտեսական և

մշակութային ուղղություններով: Նրա ***«Հնդկաստան-Վրաստան քաղաքական և մշակութային հարաբերությունները»*** վերնագիրը կրող առաջին ենթագլխում ներկայացվել են պատմական-քաղաքակրթական ընդհանրությունների հիման վրա նորագույն շրջանում երկու երկրների կապերի զարգացումն առավելապես կրթամշակութային և տնտեսական համագործակցության ուղղություններով, մինչդեռ քաղաքական հարթությունում ուսումնասիրվում է Հնդկաստանի զուսպ ու հաշվարկված չեզոքությունը՝ Ռուսաստանի և Արևմուտքի հակադրության զգայուն միջավայրում: Երկրորդ ենթագլխում՝ վերնագրված ***«Հնդկաստան-Վրաստան տնտեսական համագործակցությունը»***, ներկայացվել են Վրաստանի տնտեսական ենթակառուցվածքներում հնդկական խոշոր կոնգլոմերատների կողմից իրականացված ներդրումային ծրագրերը, ինչպես նաև առևտրաշրջանառության ցուցանիշների աճը: Քննարկվում է նաև Վրաստանի կարևորությունը Հնդկաստանի համար, մասնավորապես Սևծովյան ուղղությամբ դեպի եվրոպական շուկաներ մուտք գործելու և Հարավային Կովկասում տնտեսական ներկայությունը ինստիտուցիոնալացնելու տեսանկյունից:

Ատենախոսության չորրորդ գլուխը՝ ***«Հնդկաստան-Ադրբեջան հարաբերությունները 1991-2018 թթ.»*** քննարկում է երկկողմ հարաբերությունների զարգացումը և Ադրբեջան-Պակիստան ռազմական համագործակցության գործոնի ազդեցությունը: Առաջին ենթագլխում վերնագրված՝ ***«Հնդկաստան-Ադրբեջան քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունները»,*** ներկայացվել են Հնդկաստան-Ադրբեջան հարաբերությունների զարգացումը՝ խորհրդային շրջանի նախադրյալներից մինչև անկախությունից հետո հաստատված դիվանագիտական ու տնտեսական խորը համագործակցությունը՝ առանձնապես էներգետիկ և առևտրային ուղղություններով, ինչպես նաև Հնդկաստանի մշակութային դիվանագիտությունը: Միևնույն ժամանակ դիտարկվել է Հնդկաստանի զգուշավոր և չեզոք մոտեցումը Ադրբեջանի նկատմամբ՝ հաշվի առնելով Հնդկաստանի խոշոր ներդրումներն Ադրբեջանի էներգետիկ հատվածում: Երկրորդ ենթագլխում՝ վերնագրված ***«Պակիստան-Ադրբեջան ռազմական համագործակցությունը և Հնդկաստանի դիրքորոշումը»***, ներկայացվել են Պակիստան-Ադրբեջան հարաբերությունների ձևավորումն ու խորացումը՝ 1990-ականներից սկսած քաղաքական համերաշխությունից (Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը) մինչև ռազմական-տեխնիկական համագործակցության ինստիտուցիոնալացում, որի համատեքստում ընդգծվում է Հնդկաստանի զուսպ և հաշվարկված մոտեցումը, իսկ Հայաստանի հետ հարաբերությունները դիտարկվում են որպես Հնդկաստանի բազմաբևեռ քաղաքականության գործնական դրսևորում:

Եզրակացությունում ամփոփված են ատենախոսության հիմնական և առանցքային դրույթներն ու եզրահանգումները.

- 1991-2018 թթ. Հնդկաստանը Հարավային Կովկասը դիտարկել է որպես միասնական տարածաշրջանային ուղղություն, կարողացել ձևավորել կայուն համագործակցություն՝ չնայած ռեգիոնում առկա հակամարտությունների՝ գործելով մեկ ընդհանուր գաղափարական շրջանակի տրամաբանությամբ, որի պայմաններում Հարավային Կովկասի առանձին երկրների նկատմամբ տարբերակված մոտեցում չի դրսևորվել:
- Նշված շրջանում Հնդկաստանի ընդհանուր մոտեցումը կարելի է բնութագել զգուշավոր և սահմանափակ ներգրավվածությամբ, իսկ ազդեցության հիմնական մեխանիզմը ձևավորվել էր առավելապես «փափուկ ուժի» գործիքակազմի միջոցով՝ արտահայտվելով մշակութային դիվանագիտության, կրթական ծրագրերի, քաղաքակրթական կապերի կառուցման նախաձեռնություններում: Մինչդեռ 2018 թ. հետո Հնդկաստանի քաղաքական օրակարգում նկատելի է Հարավային Կովկասի նկատմամբ ավելի գործնական, նպատակային և տարբերակված առաջնահերթությունների ձևավորում՝ որտեղ «փափուկ ուժի» բաղադրիչին զուգահեռ աստիճանաբար մեծանում են ռազմավարական հաշվարկները, աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական շահերը:
- 1991-2018 թթ. ընթացքում Հնդկաստանը Հարավային Կովկասում չի ձգտել ազդեցիկ դիրքի, այլ իրականացրել է իրավիճակային և ճկուն քաղաքականություն՝ պահպանելով ընդհանուր հավասարակշռությունը տարածաշրջանային հակամարտությունների հնարավոր ռիսկերի պայմաններում:
- Հետսառպատերազմյան փուլում Հնդկաստանի քաղաքականությունը Հարավային Կովկասում ունեցել է փուլային ու էվոլյուցիոն բնույթ՝ պայմանավորված տարբեր գործոնների հետ: 2000-ականների կեսերից սկսած Հնդկաստանի ներգրավվածությունը տարածաշրջանում զգալիորեն ակտիվացել է, ինչը համընկնել է տնտեսական կայունացման և միջազգային համակարգում դերակատարության աճի հետ: Արդյունքում, մեծացել է հետաքրքրությունը Կասպյան ավազան-Հարավային Կովկաս ուղղության նկատմամբ՝ որպես էներգետիկ ու տրանսպորտային այլընտրանք:
- Հնդկաստանի քաղաքական և ռազմավարական շահերը Հարավային Կովկասում փոխկապակցված են եղել գլոբալ և տարածաշրջանային մրցակցային գործընթացների հետ: Մասնավորապես ԱՄՆ-Չինաստան մրցակցության սրման պայմաններում Հնդկաստանն ընդլայնել է գործընկերային ցանցը, իսկ

Հարավկովկասյան տարածաշրջանային մակարդակում Պակիստանի ռազմաքաղաքական առանցքի ակտիվացումը և Չինաստանի աճող ներկայությունը ձևավորել են հավասարակշռման անհրաժեշտություն: Այս համատեքստում Հարավային Կովկասն աստիճանաբար ընկալվել է ոչ միայն որպես հետխորհրդային տարածք, այլ եվրասիական տարածաշրջանում ավելի լայն ռազմավարական հեռանկարային ուղղություն:

- Էներգետիկ և տրանսպորտային մայրուղիների խնդիրը կարևոր դեր է խաղացել Հնդկաստանի քաղաքական հաշվարկներում, սակայն դրանք չեն եղել ինքնանպատակ: Հարավային Կովկասը հիմնականում ընկալվել է որպես տարանցիկ միջանցք դեպի Կենտրոնական Ասիա և Եվրոպա, որն արտահայտվել է «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի (INSTC) արևմտյան ճյուղի առաջ մղմամբ՝ որպես Չինաստանի «Մեկ գոտի՝ մեկ ճանապարհ» նախաձեռնության մրցակցային տարբերակ:
- Հարավկովկասյան տարածաշրջանի անվտանգության խնդիրները և չլուծված հակամարտությունները սահմանափակել են Հնդկաստանի ներգրավվածության խորությունը: Միևնույն ժամանակ, դրանք հնարավորություն են տվել Հնդկաստանին հանդես գալ հարաբերական չեզոքությամբ և զսպվածությամբ, ինչը հատկապես նկատելի է եղել Հայաստանի և Ադրբեջանի հետ հարաբերություններում:
- Հայաստան-Հնդկաստան հարաբերությունները ձևավորվել են խորապես արմատավորված պատմամշակութային փոխազդեցության և քաղաքակրթական ընդհանրությունների հիման վրա, ինչը ստեղծել էր բարենպաստ հիմք համագործակցության ընդլայնման համար: Հայաստանը՝ որպես ԵԱՏՄ անդամ, Հնդկաստանի համար դիտարկվել էր որպես հեռանկարային տնտեսական հարթակ, իսկ Հնդկաստանը՝ Հայաստանի համար գործընկեր, որը կարող էր որոշ չափով հակակշռել ադրբեջանա-պակիստանյան առանցքի ազդեցությունը: Սակայն Արցախյան հակամարտությամբ պայմանավորված իրողությունները սահմանափակել են առավել ընդլայնման հեռանկարը:
- Հնդկաստան-Վրաստան հարաբերությունները բնութագրվել են հարաճուն ու արագ զարգացմամբ, իսկ երկու երկրների շահերը մեծապես համընկել են տրանսպորտային միջանցքների, ինտեգրացիոն նախաձեռնությունների, տեխնոլոգիական, առևտրային ու կրթական ծրագրերի համատեքստում: Վրաստանի աշխարհաքաղաքական դիրքը Հնդկաստանի համար ստեղծել էր արժեքավոր «կամուրջ դեպի եվրոպական շուկաներ» մուտք գործելու համար, ինչը խթանել էր համագործակցության ինստիտուցիոնալացմանը:

- Հնդկաստանի համար Ադրբեջանը 1991–2018 թթ. ընկալվել է նախևառաջ որպես կասպյան էներգետիկ ուղղության և էներգակիրների ներմուծման աշխարհագրության դիվերսիֆիկացիայի հնարավոր բաղադրիչ, ինչպես նաև՝ տարածաշրջանային կապուղիների շրջանակում դիտարկվող գործընկեր: Այս մոտեցման հիմքում եղել են Հնդկաստանի տնտեսակենտրոն արտաքին քաղաքական օրակարգը և էներգետիկ անվտանգության առաջնահերթությունը, որոնց համատեքստում Ադրբեջանի հետ հարաբերությունները դիտարկվել են ավելի շատ գործնական-տնտեսական հարթության մեջ, քան ռազմաքաղաքական խորացման տրամաբանությամբ: Միևնույն ժամանակ, Հնդկաստանի ներգրավվածությունն Ադրբեջանի ուղղությամբ մնացել էր սահմանափակ՝ պայմանավորված մի շարք կառուցվածքային գործոններով: Պակիստան-Ադրբեջան հարաբերությունների փաստացի դաշնակցային բնույթը և անվտանգային բաղադրիչի գերակայությունը Հնդկաստան-Ադրբեջան քաղաքական օրակարգի շուրջ ստեղծել էին քաղաքական զգայունություն՝ հատկապես հաշվի առնելով Հնդկաստան-Պակիստան դիմակայությունը:
- Հնդկաստանի քաղաքականությունը Հարավային Կովկասում առավել արդյունավետ է դրսևորվել այն ուղղություններում, որտեղ համընկել են երկկողմ շահերը և տարածաշրջանային կայունության տրամաբանությունը: 1991-2018 թթ. կարելի է դիտարկել որպես զարգացման մի փուլ, որն էապես նպաստել է հետագա շրջանի համագործակցությանը՝ բարձրացնելով այն ռազմավարական մակարդակի:

Ատենախոսության թեմայով հեղինակի գիտական հրապարակումները

1. Հովսեփյան Ա., Հնդկաստանի արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները հետսառպատերազմյան տարիներին // «Ակունք» գիտական հոդվածների հավաքածու, թիվ 2 (18), Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, Երևան, 2018 թ., էջ 22-32:
2. Հովսեփյան Ա., Հնդկատան-Վրաստան տնտեսական համագործակցությունը // «Այլընտրանք» գիտական հանդես, թիվ 3, Երևան, հուլիս-սեպտեմբեր 2019թ., էջ 25-30:
3. Հովսեփյան Ա., Հնդկաստան-Ադրբեջան քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունները // «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, թիվ 3 (4), «Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոն, Երևան, 2019թ., էջ 90-95:
4. Հովսեփյան Ա., Պակիստան-Ադրբեջան ռազմական համագործակցությունը և Հնդկաստանի դիրքորոշումը // «Գիտական Արցախ», թիվ 2 (3), Արցախի

երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում (ԱԵԳՄՄ), Երևան, 2019թ., էջ 394-400:

5. Հովսեփյան Ա., Հնդկաստան-Վրաստան քաղաքական և մշակութային հարաբերությունները // «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, թիվ 4 (9), «Զորավար Սեպուհ» պատմաքաղաքական վերլուծական կենտրոն, Երևան, 2020թ., էջ 131-135:

6. Հովսեփյան Ա., Հնդկաստան-Հայաստան քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերությունները // «Տարածաշրջան և աշխարհ», Հատոր XI, թիվ 2, Սևծովյան-Կասպյան տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների հանրային ինստիտուտ, Երևան, 2020թ., էջ 26-30:

7. Հովսեփյան Ա., Հայ-հնդկական առնչությունները. պատմական ակնարկ // «Արևելագիտության հարցեր» թիվ 22, ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետ, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2022թ., էջ 196-204.

ОВСЕПЯН АШХЕН АНУШАВАНОВНА

ОСОБЕННОСТИ ВНЕШНЕЙ ПЛИТИКИ ИНДИИ НА ЮЖНОМ КАВКАЗЕ 1991-2018 ГГ.

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 «Всемирная история».

Защита состоится 25 февраля 2026 года в 12:00 на заседании специализированного совета 006 «Всемирная история» КВОН РА действующего при Институте востоковедения Национальной Академии Наук РА (0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

После окончания “холодной войны” в системе международных отношений сформировались новые реалии, в условиях которых Индия была вынуждена преодолеть тяжёлые экономические вызовы 1990-х годов, учитывая, что СССР являлся её ключевым экономическим и стратегическим партнёром. В 1991-1998 гг. Индии удалось преодолеть основные последствия экономического кризиса, а в начале 2000-х во внешнеполитической повестке обозначилась определённая активизация. В условиях системных перестроек международного порядка и поиска новых партнёров Индия взяла курс на диверсификацию внешней политики, стремясь сформировать новые политические и экономические связи, а также укрепить присутствие в новообразованных государствах. В результате Южный Кавказ стал перспективным направлением взаимодействия в контексте коммуникационных коридоров, связывающих Центральную Азию, Чёрное море и Европу.

Научная значимость исследования обусловлена необходимостью системно-структурного анализа политики Индии в отношении стран Южного Кавказа в контексте региональных конфликтов и глобального противостояния. Особую актуальность тема приобретает для Республики Армения с учётом нарастающего военно-политического сотрудничества с Индией после Карабахской войны 2020 г. и трансформации отношений в сторону стратегического характера.

Вышеизложенное, а также тот факт, что без изучения политики Индии в отношении Южного Кавказа 1991-2018 гг. невозможно понять не только трансформацию армяно-индийских отношений, но и трансформацию отношений с 2018 г. по настоящее время.

Диссертация состоит из введения, четырёх глав по два пункта в каждой, заключения и списка использованных источников и литературы.

Во введении обосновывается актуальность темы исследования, указывается объект, предмет, цель и задачи работы, научная новизна исследования, хронологические рамки исследования, представлены экспертиза и официальное одобрение работы, а также краткая теория использованных источников и литературы.

Первая глава диссертации называется "Основные особенности внешней политики Индии в конце 20-начале 21 века: общий обзор". В первом пункте, озаглавленном "Основные направления внешней политики Индии в постхолодновоенный период", рассматриваются и интерпретируются трансформация внешней политики Индии в постхолодновоенное время. Во втором пункте, озаглавленном "Отношения Индии с США, Россией и Китаем в постхолодновоенную эпоху", раскрывается эволюция отношений Индии с США, Россией и Китаем.

В первом пункте второй главы диссертации, озаглавленной "Отношения Индии и Армении в 1991–2018 гг.", ("Армяно-индийские связи: исторический обзор") исследовано и представлено историческое развитие армяно-индийских связей. Во втором пункте второй главы, озаглавленном "Политические, экономические и культурные отношения Индии и Армении", рассматривается новейший этап армяно-индийских отношений с указанием также предложений, направленных на укрепление партнерства.

Третья глава диссертации озаглавлена "Отношения Индии и Грузии в 1991–2018 гг.". В первом пункте, озаглавленном "Политические и культурные отношения Индии и Грузии", показано развитие связей двух стран. Во втором пункте, озаглавленном "Экономическое сотрудничество Индии и Грузии", представлены инвестиционные проекты, реализованные крупными индийскими конгломератами.

Четвертая глава диссертации озаглавлена "Отношения Индии и Азербайджана в 1991–2018 гг.". В первом пункте, озаглавленном "Политические, экономические и культурные отношения Индии и Азербайджана", представлено развитие индийско-азербайджанских отношений. Во втором пункте, озаглавленном "Военное сотрудничество Пакистана и Азербайджана и позиция Индии", рассмотрены формирование и углубление пакистано-азербайджанских отношений и подчеркивается восприятие Индией этого.

В конце диссертации представлены выводы автора, вытекающие из анализа глав работы и список использованных источников и литературы.

HOVSEPYAN ASHKHEN ANUSHAVAN

FEATURES OF INDIA'S FOREIGN POLICY IN THE SOUTH CAUCASUS 1991-2018

Dissertation for the degree of Candidate of Historical Sciences in specialty 07.00.02 "World History".

The defense will take place on February 25, 2026 at 12:00 at the meeting of the HESC Specialized Council 006 at the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave. 24/4).

SUMMARY

After the end of the "Cold War", new realities emerged in the system of international relations, under which India was compelled to overcome the severe economic challenges of the 1990s, given that the USSR had been its key economic and strategic partner. In 1991-1998, India managed to address the main consequences of the economic crisis, and from the early 2000s its foreign policy agenda began to display a certain degree of activation. Amidst systemic transformations of the international order and the search for new partners, India adopted a course of foreign policy diversification, seeking to establish new political and economic ties and to strengthen its presence in newly independent states. As a result, the South Caucasus became a promising direction of engagement within the context of communication corridors linking Central Asia, the Black Sea, and Europe.

The scientific significance of the study is driven by the need for a systemic-structural analysis of India's policy toward the South Caucasian states in the context of regional conflicts and global confrontation.

The topic acquires particular relevance for the Republic of Armenia, given the growing military-political cooperation with India after the 2020 Karabakh war and the transformation of bilateral relations toward a strategic character.

The abovementioned, as well as the fact that without studying India's foreign policy with the South Caucasus from 1991 to 2018, it is impossible to understand not only the transformation of Armenian-Indian relations, but also the transformation of relations from 2018 to the present.

The dissertation is structured into an Introduction, four chapters with two sub-chapters each, a conclusion, and a comprehensive list of sources and literature used.

The introduction serves to substantiate the relevance of the research topic, clearly outlining the object, subject, purpose, and objectives of the work. It also emphasizes the scientific novelty of the research, establishes the chronological framework of the study,

and presents the examination and official approval of the work. Additionally, it provides a brief overview of the sources and literature used.

The first chapter of the dissertation is titled "The Main Features of India's Foreign Policy in The Late 20th and Early 21st Centuries: An Overview". The first sub-chapter, titled "The Main Directions of India's Foreign Policy in Post-Cold War Period", examines and interprets the reshaping of India's foreign policy within the conditions of the new world order. The second sub-chapter, titled "India's relations with the United States, Russia and China in the post-Cold War era", reveals the evolution of India's relations with the USA, Russia and China.

In the first sub-chapter of the second chapter of the dissertation titled "India-Armenia Relations 1991-2018" (titled "Armenian-Indian Relations: A Historical Overview"), the historical development of Armenian-Indian connections is studied and presented, ranging from ancient trade links and the formation of Armenian communities in key Indian cities during the period of the Mughal Empire.

The second sub-chapter of the second chapter: "India-Armenia Political, Economic, and Cultural Relations", presents the modern phase of Armenian-Indian relations, while also providing specific recommendations aimed at strengthening the bilateral partnership.

The third chapter of the dissertation, titled "India-Georgia Relations 1991-2018", examines the specific aspects of the bilateral relationship between the two nations in the post-Soviet era. The first sub-chapter, "India-Georgia Political and Cultural Relations", delves into the development of modern ties based on historical-civilizational commonalities. The second sub-chapter, titled "India-Georgia Economic Cooperation", addresses the investment programs implemented by large Indian conglomerates.

The fourth chapter of the dissertation is titled "India-Azerbaijan Relations 1991-2018". In the first sub-chapter, titled "India-Azerbaijan Political, Economic, and Cultural Relations", the development of India-Azerbaijan relations is presented. The second sub-chapter, titled "Pakistan-Azerbaijan Military Cooperation and India's Decision", explores the formation and deepening of Pakistan-Azerbaijan relations and emphasizing India's strategic consideration about this.

At the end of the dissertation, the author presents conclusions drawn from the analysis of the chapters, along with a list of used sources and literature.